



ԳԳԾ-05/1214
17/05/2025թ

Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն

ՀՀ, ք. Երևան, 0078, Հալաբյան փ. 41ա

Գնահատման պայմանագրի կատարմամբ, Ձեզ ենք ներկայ

սեփականության իրավունքով պատկանող Երևան, Աջափնյակ Ա. Միկոյան փողոց 2/2 շենք, 182 հասցեում գտնվող բնակարանի գնահատման հաշվեքվությունը:

Սույն գնահատման արդյունքների համաձայն, գնահատման ներկայացված Երևան, Աջափնյակ Ա. Միկոյան փողոց 2/2 շենք, 182 հասցեում գտնվող բնակարանի շուկայական արժեքը, առ 04.03.2025 թ. կազմում է 56400000 (հիստունվեց միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ:

Ներկայացվում է գնահատման հաշվեքվությունը՝ «22» թերթ:

«Արմ Թռասթ» ՍՊԸ Տնօրեն

Գնահատող՝



Ա. Ստեփանյան

Ս. Թովալյան

Գնահատման սուբյեկտները.	
Պատվիրատու	Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն
Հասցե	Հայաստաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0078, Հալաբյան փ. 41ա
Գնահատող	«Արմ Թռապ» ՍՊԸ
Հասցե	ՀՀ, ք. Երևան, Ռուբինյանց 31

Գնահատման օբյեկտը.	
Նպատակային նշանակությունը	բնակելի
Օգտագործման նպատակը	բնակարան
Մակերեսը (քմ)	74,1
Հասցե	Երևան, Աջափնյակ Ա. Միկոյան փողոց 2/2 շենք, 182 բնակարան
Վկայական	05042022-01-0040 տրված 05.04.2022 թ.
Հարկայնություն/հարկ	12/2

Գնահատման առանձնահատկությունները	
Գնահատման արժեքի տեսակը	շուկայական արժեք
Գնահատման գործառույթը	անշարժ գույքը օտարելու համար
Գնահատվող իրավունքի տեսակը	սեփականության իրավունք



ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՂ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Ստորև ներկայացվող պայմանները հանդիսանում են սույն հաշվետվության անքակտելի մասը.

1. Սույն հաշվետվությունը վավեր է միայն ամբողջությամբ ներկայացված և միայն նշված նպատակի համաձայն: Գնահատողը և Պատվիրատուն չեն կարող օգտագործել հաշվետվությունը (կամ նրա առանձին մասը) այլ կերպ քան նախատեսված է գնահատման պայմանագրով:
2. Գնահատման համար տրամադրված և հաշվետվության մեջ արտացոլված տեղեկությունները համարվում են հավաստի, սակայն գնահատողը չի կարող երաշխավորել վերոհիշյալ տվյալների բացարձակ ճշտությունը, այդ պատճառով հնարավորության դեպքում, հղումներ է կատարվում տեղեկատվության բոլոր աղբյուրներին:
3. Գնահատողը գնահատվող գույքի տեղագնումը կատարել է հասարակ տեսողական զննությամբ և պատասխանատու չէ գնահատվող գույքի թաքնված բնութագրիչների կամ թերությունների համար:
4. Գնահատողը գործել է, որպես անկախ կատարող:
5. Գնահատվող առարկայի վերաբերյալ գնահատողի կարծիքը վավեր է միայն գնահատման օրվա դրությամբ: Գնահատողը պատասխանատվություն չի կրում տնտեսական, սոցիալական, ֆիզիկական, իրավական, քաղաքական և այլ գործոնների փոփոխության համար, որոնք կարող են ի հայտ գալ հետագայում և ներազդել շուկայական իրավիճակի, հետևաբար, և օբյեկտի շուկայական արժեքի վրա:
6. Գնահատողի կողմից կատարված ուսումնասիրությունները և եզրակացությունները ամբողջությամբ անկանխակալ են:
7. Գնահատողի կողմից կատարված աշխատանքի արդյունքների իսկությունը հիմնված է մատչելի տեղեկատվության վրա:
8. Սույն գնահատման հաշվետվությունը պարունակում է գնահատողի մասնագիտական կարծիքը գնահատվող առարկայի վերաբերյալ, և չի հանդիսանում երաշխիք, որ այն կվաճառվի ազատ շուկայում սույն հաշվետվության մեջ նշված արժեքին հավասար գնով:
9. Գնահատողի կատարված աշխատանքի վարձատրությունը կապված չէ գնահատման արդյունքի և կատարված եզրակացությունների հետ:
10. Գնահատողը պատասխանություն չի կրում գնահատվող օբյեկտի նկատմամբ իրավունքի տեսակի իրավական նկարագրության հետ կապված հարցերի համար: Գնահատվող օբյեկտի՝ Պատվիրատուի կողմից ներկայացված իրավական փաթեթը համարվում է արժանահավատ: Ենթադրվում է, որ գնահատվող օբյեկտի նկատմամբ իրավունքի տեսակները լիարժեք համապատասխանում են ՀՀ գործող օրենսդրությանը: Գնահատվող առարկան գնահատվում է որպես ազատ որևէ սահմանափակումներից և գույքային պահանջներից, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի: Գնահատողը ենթադրում է, որ գնահատվող առարկան լիարժեք համապատասխանում է նորմատիվային փաստաթղթերին, հակառակ դեպքում նման անհամապատասխանությունները մատնանշված և հաշվի են առնված հաշվետվությունում:
11. Գնահատողը չի իրականացրել տեղանքի չափագրման աշխատանքներ, և պատասխանատու չէ դրանց համար:
12. Գնահատողը պարտավոր չէ իրականացնել վերլուծությունների և հաշվարկների մեթոդաբանության ամբողջական նկարագրություն, որը հանդիսանում է Գնահատողի մտավոր սեփականությունը:
13. Հաշվետվությունում բոլոր նկարները ներառված են, որպեսզի ընթերցողը պատկերացում կազմի գնահատող օբյեկտի վերաբերյալ: Գնահատողը պարտավոր չէ ներկայացնել գնահատվող օբյեկտի վերաբերյալ ամփոփիչ նյութեր:
14. Անշարժ գույքի գնահատման տվյալների առևտրային գաղտնիության պայմանները:
Սույն հաշվետվությունը հանդիսանում է «Արմ Թռասթ» ՍՊԸ-ի արտադրանքը և իր մեջ ներառում է առևտրային գաղտնիք, որը ենթակա չէ հրապարակման առանց Գնահատողի գրավոր համաձայնության: Պատվիրատուն պարտավոր է պահել Գնահատողի կողմից ստացված

ցանկացած տեղեկատվության գաղտնիությունը: Համաձայն ընդունված մասնագիտական չափորոշիչների՝ Գնահատողի կողմից աշխատանքներին ներգրավված փորձագետները նույնպես, պահում են Պատվիրատուի ստացված ցանկացած տեղեկատվության գաղտնիությունը:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԻՃԱՀԱՐՈՒՅՑ ԼԻՆԵԼԸ

Հաշվետվության տվյալների, ինչպես նաև անշարժ գույքի շուկայական գնի արժանահավատության խնդիրները կարող են պարզաբանվել լիազոր մարմնին ուղղված անշարժ գույքի գնահատման գործունեության սուբյեկտներից յուրաքանչյուրի դիմումի հիման վրա կամ լիազոր մարմնի նախաձեռնությամբ, իսկ դրանց վերաբերյալ վեճերի առկայության դեպքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Տվյալ հաշվետվության գնահատման առարկան է՝ Երևան, Աջափնյակ Ա. Միկոյան փողոց 2/2 շենք, 182 հասցեում գտնվող բնակարանը՝ 74,1 քմ մակերեսով:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ

Գնահատման նպատակը դիտարկվող անշարժ գույքի շուկայական արժեքի որոշումն օտարման համար: Շուկայական արժեքը հաշվարկային դրամական մեծություն է, որով հավանաբար կիրականացվեր, գնահատման ամսաթվի դրությամբ, շահագրգիռ կողմերի միջև, բաց և մրցակցային շուկայում գնահատվող օբյեկտի փոխանակում, որի պարագայում կողմերից յուրաքանչյուրը, իրազեկված լինելով, գործում է ողջամտորեն և առանց հարկադրանքի:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ

Գնահատումը կատարվել է պատվիրատուի առաջադրանքով, որը հետևյալն է. անշարժ գույքի օտարման նպատակով գնահատել սեփականության իրավունքով պատկանող՝ Երևան, Աջափնյակ Ա. Միկոյան փողոց 2/2 շենք, 182 հասցեում գտնվող բնակարանը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 05042022-01-0040, տրված 05.04.2022 թ., ներկայացված բնակելի նպատակային նշանակությամբ, բնակարան գործառնական նշանակությամբ անշարժ գույքը և որոշել անշարժ գույքի շուկայական արժեքը:

ԳՆԱՀԱՏՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

Անշարժ գույքի գնահատման համար օգտագործված փաստաթղթերի ցանկ.

- Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 05042022-01-0040, տրված 05.04.2022 թ. համաձայն որի դիտարկվող անշարժ գույքը սեփականության իրավունքով

Ըստ պատվիրատուի կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատվող անշարժ գույքի նկատմամբ այլ իրավունքներ և սահմանափակումներ չկան:

Գնահատվում անշարժ գույքի սեփականության իրավունքի ամբողջ փաթեթը:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ, ՏԵՂԱՋՆՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ

Տեղազննության ամսաթիվն է՝ 04.03.2025 թ.:

Գնահատման ամսաթիվն է՝ 04.03.2025 թ.- 24.03.2025 թ.:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԱՏՎԻՐԱՏՈՒՄ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Անուն ազգանուն

Հասցե

Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն

Հայաստաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0078, Հալաբյան փ. 41ա

ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Անվանումը

Գտնվելու վայրը

Տնօրեն

«Արմ Թռաթ» ՍՊԸ

ՀՀ, ք. Երևան, Ռուբինյանց 31

Ա. Ստեփանյան

«Արմ Թռաթ» ՍՊ ընկերության որակավորված գնահատող, «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության ապրանքագիտական փորձաքննությունների բաժնի փորձագետ, բարձրագույն տնտեսագիտական կրթությամբ, մասնագիտական 6 տարվա ստաժով, անշարժ գույքի գնահատման և հետազոտություններ իրականացնելու իրավասությամբ, հանդիսանում է «Գնահատողների ինքնակարգավորվող միություն փորձագիտական խորհուրդ» ՀԿ անդամ, (անշարժ գույքի գնահատողի որակավորման վկայական ԱԳԳ 253 տրված՝ 21.12.2018 թ. ՀՀ ԿԱԱԳԿՊԿ կողմից, գնահատողի որակավորման վկայական ԳԳ-2022-62, տրված՝ 21.12.2022 թ. ՀՀ ԿԿ կողմից, ՀՀ ԱՆ կողմից 10.11.2023 թ. տրված թիվ 350 վկայական՝ «Ապրանքագիտական փորձաքննություն» մասնագիտությամբ՝ «16-05» ենթատեսակով):

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Գնահատման աշխատանքների ընթացակարգը բաղկացած է հետևյալ հաջորդական փուլերից. նախապատրաստական փուլ և հիմնական փուլ:

1) Նախապատրաստական փուլում իրականացվում է՝

ա. գնահատվող օբյեկտի փաստաթղթերի հավաքագրում և ուսումնասիրություն, պատվերի ընդունում,

բ. գնահատման առաջադրանքի ձևակերպում և պայմանագրի կնքում:

2) Փաստաթղթերի նախնական ուսումնասիրության ընթացքում փաստաթղթերի հիման վրա անհրաժեշտ է պարզել գնահատման ներկայացված օբյեկտի իրավական կարգավիճակը, ինչպես նաև գնահատվող գույքի հիմնական տվյալները: Գնահատման առաջադրանքը պետք է պարտադիր ներառի գնահատման նպատակը և գնահատվող իրավունքները և սահմանափակումները: Գնահատման նպատակը և գնահատվող իրավունքի տեսակը պետք է համաձայնեցված լինեն գնահատման սուբյեկտների հետ:

3) Գնահատման պայմանագիրը կնքվում է գրավոր՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով :

4) Հիմնական փուլում իրականացվում են՝

ա. գնահատվող օբյեկտի տեղազննում (լուսանկարում) (կախված գնահատվող օբյեկտի տեսակից),

բ. գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրում, մշակում և վերլուծություն,

գ. գնահատման համապատասխան սկզբունքների, մոտեցումների և մեթոդների ընտրություն,

դ. գնահատում՝ ընտրված մոտեցման (կամ մոտեցումների) կիրառմամբ,

ե. վերջնական արդյունքի հաշվարկման նպատակով տարբեր մոտեցումներով հաշվարկված արդյունքների համադրում,

զ. հաշվետվության կազմում և տրամադրում:

5) Գնահատման հիմնական փուլի գործառույթներն իրականացնելիս գնահատողը պետք է

առաջնորդվի Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված

ստանդարտների դրույթներով և գնահատումը պետք է իրականացնի գնահատման

առաջադրանքին համապատասխան՝ հիմք ընդունելով պատվիրատուի կողմից ներկայացված

փաստաթղթերում արտացոլված գնահատման համար անհրաժեշտ տվյալները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Գնահատման հիմնական մոտեցումներն են՝ համեմատական մոտեցում, եկամտային մոտեցում, ծախսային մոտեցում:

1) Գնահատման այս մոտեցումներից յուրաքանչյուրը ներառում է մանրամասն ներկայացված կիրառման տարբեր մեթոդներ,

2) Գնահատման մոտեցումների և մեթոդների ընտրության նպատակն է գտնել առավել հարմար մեթոդ կոնկրետ հանգամանքներում: Միևնույն մեթոդը հնարավոր չէ բացարձակապես բոլոր հնարավոր իրավիճակներում օգտագործելու համար: Դրանց ընտրության ժամանակ պահանջվում է հաշվի առնել առնվազն հետևյալը.

ա. գնահատման առաջադրանքի պայմաններին և նպատակին համապատասխան որոշվում են սահմանված արժեքի տեսակը և նախադրյալը,

բ. գնահատման հնարավոր մոտեցումների և մեթոդների համեմատաբար ուժեղ և թույլ կողմերը,

գ. յուրաքանչյուր մեթոդի նպատակահարմարությունը՝ հաշվի առնելով գնահատվող օբյեկտի բնույթը և համապատասխան շուկայի մասնակիցների դիրքորոշումը,

դ. մեթոդի (մեթոդների) կիրառման համար անհրաժեշտ հավաստի տեղեկատվության առկայություն:

3) Գնահատողներն օբյեկտի գնահատման համար պարտադրված չեն օգտագործել մեկից ավելի մեթոդներ, հատկապես, երբ գնահատողն ունի մեկ մեթոդի ճշտության և հուսալիության բարձր աստիճան՝ հաշվի առնելով գնահատման առաջադրանքի կատարման փաստերն ու պայմանները: Գնահատողը պետք է հաշվի առնի մի քանի մոտեցումների, մեթոդների և մեկից ավելի մեթոդների օգտագործման հնարավորությունը, ինչպես նաև պետք է հաշվի առնեն մեկից ավելի մոտեցում կամ գնահատման մեթոդներ, որոնք կարող են օգտագործվել արժեքի որոշման համար, հատկապես, երբ փաստացի կամ դիտարկված ելակետային տվյալները բավարար չեն մեկ մեթոդի համար հուսալի եզրակացություն ստանալու համար: Այն դեպքերում, երբ օգտագործվում է մեկից ավելի մոտեցում և մեթոդ կամ մեկ մոտեցման շրջանակներում նույնիսկ մի քանի մեթոդներ, այդ մի քանի մոտեցումների կամ մեթոդների վրա հիմնված արժեքի եզրակացությունը պետք է լինի հավաստի, իսկ տարբեր արժեքների վերլուծության և արդյունքների համաձայնեցումը՝ մեկ եզրակացության մեջ, առանց միջինացման, պետք է նշված լինի գնահատման հաշվետվությունում:

4) Գնահատողը պատասխանատվություն է կրում յուրաքանչյուր գնահատման առաջադրանքի համար համապատասխան մոտեցման (մոտեցումների) ընտրության համար:

5) Երբ տարբեր մոտեցումները կամ մեթոդները հանգեցնում են արժեքի ցուցանիշների զգալի անհամապատասխանության, գնահատողը պետք է կատարի ընթացակարգեր, հասկանալու համար, թե ինչու են արժեքի ցուցանիշները տարբերվում, քանի որ սովորաբար նպատակահարմար չէ պարզապես կշռել երկու կամ ավելի տարբեր արժեքի ցուցանիշներ: Նման դեպքերում արժեքները պետք է վերանայվեն սույն կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջներով, որոշելու համար, թե արդյոք կիրառված մոտեցումներից կամ մեթոդներից որևէ մեկը կարող է ապահովել արժեքի ցուցանիշի ավելի համապատասխան կամ ավելի հուսալի արդյունք:

6) Գնահատողները պետք է առավելագույնս օգտագործեն դիտարկվող շուկայական տեղեկատվությունը բոլոր երեք մոտեցումներում: Անկախ աղբյուրի ելակետային տվյալների և գնահատման մեջ օգտագործվող ենթադրություններից՝ գնահատողը պետք է իրականացնի համապատասխան վերլուծություն՝ գնահատելու այդ նախնական տվյալներն ու ենթադրությունները և դրանց համապատասխանությունը:

7) Գնային տեղեկատվությունն ակտիվ շուկայում համարվում է առավել իրատեսական արժեքի ապացույց: Որոշ արժեքի տեսակներ կարող են արգելել գնահատողին ակտիվ շուկայից գների վերաբերյալ տեղեկատվության մեջ սուբյեկտիվ ճշգրտումներ իրականացնել: Ոչ ակտիվ շուկայից ստացվող գնային տեղեկատվությունը դեռ կարող է լինել արժեքի լավ ապացույց, սակայն դրա հետ կապված կարող են նաև սուբյեկտիվ ճշգրտումներ պահանջվել:

Համեմատական մոտեցման կիրառման դեպքում արժեքը որոշվում է գնահատվող օբյեկտը նույնական կամ համադրելի (նմանատիպ) օբյեկտների հետ համեմատելով, որոնց համար առկա է գների վերաբերյալ տեղեկատվություն:

Եկամտային մոտեցումը տրամադրում է արժեքի ցուցիչ՝ ապագա դրամական հոսքերը փոխակերպելով ընդհանուր ընթացիկ արժեքի: Եկամտային մոտեցմամբ արժեքը որոշվում է գնահատվող օբյեկտի եկամտաբերությամբ, դրամական հոսքի կամ ծախսերի խնայողությունների արժեքի հիման վրա:

Ծախսային մոտեցման հիմքում ընկած է այն սկզբունքը, ըստ որի գնորդը գնահատվող օբյեկտի համար չի վճարի ավելին, քան հավասար օգտակարությամբ օբյեկտ ձեռք բերելու դեպքում, լինի դա գնման կամ կառուցման միջոցով, գործընթացը բարդացնող գործոնների բացակայությամբ՝

անհարկի ժամանակ, անհարմարություն, ռիսկ կամ այլ գործոններ: Այս մոտեցումը հնարավոր է դարձնում ստանալ արժեք օբյեկտի արժեքը փոխարինման կամ վերարտադրման ընթացիկ ծախսերի որոշման միջոցով և ֆիզիկական մաշվածության բոլոր տեսակների կիրառմամբ:

Սույն գնահատմամբ գնահատման ծախսային մոտեցումը չի կիրառվել, քանի որ գնահատվող անշարժ գույքին բաժին ընկնող հողամասի, ընդհանուր օգտագործման տարածքների շուկայական արժեքի որոշումը կհանգեցնեն անխուսափելի անճշտությունների, քանի որ նշված միավորների որոշման վերաբերյալ գնահատողին տեղեկատվություն ձեռք բերել չի հաջողվել: Բացի այդ գնահատվող անշարժ գույքի սեփականատերը չի կարող ինքնուրույն տնօրինել անշարժ գույքին բաժին ընկած հողամասն ու ընդհանուր օգտագործման տարածքները:

ԳՆԱՀԱՏՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Գնահատողի կարծիքով, գնահատվող անշարժ գույքն իր տեխնիկական, իրավական և տեղակայման բնութագրերով բավարարում է արդի շուկայական պատկերացումներին: Գնահատվող գույքը 12 հարկանի բազմաբնակարան բնակելի շենքի 2-րդ հարկում գտնվող բնակարան է: Գնահատողի բազան բաղկացած է յոթ ներքին հարդարման վիճակներից՝ գնահատվող անշարժ գույքի ներքին հարդարումը համապատասխանում է լավ աստիճանին:

Բնակարանի տեխնիկական նկարագրությունը բերված է 1- աղյուսակում:

Աղյուսակ 1

Հասցե	Երևան, Աջափնյակ Ա. Միկոյան փողոց 2/2 շենք, 182 բնակարան
Նպատակային նշանակությունը	բնակելի
Գործառնական նշանակությունը	բնակարան
Ընթացիկ օգտագործումը	բնակարան
Սահմանափակումներ	սահմանափակումներ չունի
Գույքային իրավունքները	սեփականության
Սեփականատերեր	
Սեփ. իրավ. գրանց. վկայականի համարը	05042022-01-0040
Սեփ. իրավ. գրանց. վկայականի տրման ամսաթիվը	05.04.2022 թ.
Տեղադրությունը	միջինից բարձր
Դիրքը	միջինից բարձր
Տարածաշրջանի գրավչությունը	լավ
Տրանսպորտային մատչելիությունը	ասֆալտապատ
Մեքենաների կայանման հարմարավետությունը	ունի կայանատեղի
Հեռավորությունը հասար. սպասարկ. Օբյեկտներից	200 մ շառավղով
Շրջակա միջավայրը	բնակելի թաղամաս
Բարեկարգված բակի առկայությունը	կիսաբարեկարգ
Այլ տեղեկատվություն	չունի
Շենքի կառուցվածքը	մոնոլիտ
Շենքի կառուցման տարեթիվը	նորակառույց
Բնակարանի միջհարկային ծածկը	երկաթբետոնե
Վթարայնության աստիճան	տեղեկատվություն առկա չէ
Առաստաղի բարձրությունը	3,6 մ
Արտաքին պատերը	քարե
Արտաքին հարդարումը	երեսպատված
Բնակարանի ներքին ընդհանուր մակերեսը	74,1

Շենքի հարկայնությունը	12
Բնակարանի հարկը	2
Վերջին հարկ	ոչ
Արտաքին լուսամուտներ	մետաղապլաստե
Արտաքին լուսամուտների ընդհանուր վիճակը	լավ
Արտաքին դուռ	մետաղական երեսպատված
Արտաքին դռան վիճակը	լավ
Միջսենյակային դռներ	փայտե, մետաղապլաստե
Միջսենյակային դռների ընդհանուր վիճակը	լավ
Սենյակները	հատակը՝ սալիկապատ, լամինատե
	պատերը՝ ներկած
	առաստաղը՝ ներկած
	լավ
Խոհանոցը	հատակը՝ սալիկապատ
	պատերը՝ ներկած
	առաստաղը՝ ներկած
	լավ
Սանհանգույցը	հատակը՝ սալիկապատ
	պատերը՝ սալիկապատ
	առաստաղը՝ կախովի
	լավ
Ջրամատակարարում	առկա է
Ջրահեռացում	առկա է
Էլեկտրամատակարարում	առկա է
Գազամատակարարում	առկա է
Ջեռուցում	ջեռուցման համակարգով

Լավագույն և առավել արդյունավետ օգտագործման տարբերակ


Լավագույն և առավել արդյունավետ օգտագործման սկզբունքը հանդիսանում է անշարժ գույքի շուկայական արժեքի գնահատման հիմնարար սկզբունք, որը բացահայտում է անշարժ գույքի ֆիզիկապես հնարավոր, իրավաբանորեն թույլատրելի և ֆինանսապես իրագործելի տարբերակը:

Անշարժ գույքի լավագույն և առավել արդյունավետ օգտագործման վերլուծության ընթացքում կարող են դիտարկվել օգտագործման մի քանի հնարավոր տարբերակներ, որոնք այնուհետև պետք է համադրվեն ֆինանսական արդյունավետության և նպատակահարմարության տեսանկյունից: Օգտագործման այն տարբերակը, որն ապահովում է անշարժ գույքի առավել բարձր արժեքը, համարվում է օգտագործման առավել արդյունավետ տարբերակ: Լավագույն և առավել արդյունավետ տարբերակի ընտրությունը գնահատողի մասնագիտական կարծիքն է անշարժ գույքի օգտագործման տարբերակի վերաբերյալ և որոշվում է շուկայական տեղեկատվության վերլուծության արդյունքում:

Գնահատվող օբյեկտի շուկայական արժեքը պետք է արտացոլի նաև դրա առավել արդյունավետ օգտագործումը: Գնահատվող օբյեկտի արդյունավետ օգտագործումն իրենից ներկայացնում է այնպիսի օգտագործում, որը դրա ներուժը հասցնում է առավելագույնին և որը (ֆիզիկապես) հնարավոր է, իրավաբանորեն թույլատրելի և ֆինանսապես իրագործելի: Առավել արդյունավետ օգտագործումը կարող է ենթադրել գնահատվող օբյեկտի գոյություն ունեցող օգտագործման շարունակություն կամ համապատասխանել դրա այլընտրանքային օգտագործմանը: Այն որոշվում է

գնահատվող օբյեկտի այնպիսի օգտագործմամբ, որը շուկայի մասնակիցը մտադիր է հաշվի առնել գնի ձևավորման ժամանակ, որը նա պատրաստ կլինի առաջարկել օբյեկտի համար:
Գնահատողի կողմից կատարված վերլուծությունների արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ գնահատման ներակայացված անշարժ գույքի լավագույն և առավել արդյունավետ օգտագործման տարբերակը հանդիսանում է դրա ընթացիկ օգտագործուման տարբերակը:

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԵԶԱՅԻՆ ԴՐՎԱԳ



<https://yandex.com/maps/10262/yerevan/house/YE0Ycg9oS0ABQFpqfX5xeHVqZw==/?ll=44.488256%2C40.209993&z=16.67>

ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ՈՐՈՇՈՒՄ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՄՈՏԵՑՄԱՄԲ

Այս մոտեցման կիրառման ընթացքում իրականացվել է համանման անշարժ գույքի համար շուկայական իրավիճակի վերլուծություն և վերլուծության համար արժանահավատ տեղեկատվության ընտրություն, համեմատության համապատասխան միավորի որոշում, համեմատության անհրաժեշտ տարրերի առանձնացում, համեմատության միավորների արժեքի ճշգրտում՝ ըստ համեմատության տարրերի, համեմատվող անշարժ գույքի համար արժեքի մի քանի ճշգրտված ցուցանիշների համապատասխանեցումը մեկ ցուցանիշին:

Գնահատման գործընթացում ընդունված են համեմատության հիմնական տարրեր՝

- վաճառքի պայմանները և շուկայի իրավիճակը
- գույքային իրավունքներն ու սահմանափակումները (այդ թվում՝ իրավունքների և օգտագործման նկատմամբ)
- հիմնական և օժանդակ շինությունների չափերը (մակերես, բարձրություն, ծավալ)
- կոնստրուկտիվ նյութերի տարրերի տեսակը,
- հարկայնությունը, հարկը, կառուցման տարեթիվը
- ավարտվածության աստիճանը (կիսակառույց շինությունների գնահատման ժամանակ հաշվի է առնվում օրենսդրությամբ սահմանված կարգով մշակված և հաստատված նախագիծը),
- տեղադրությունը, դիրքը, տրանսպորտային հանգույցների առկայությունը,
- ներքին և արտաքին հարդարման վիճակը,
- ավտոկայանատեղիի առկայությունը կամ հնարավորությունը,

- գործառնական նշանակությունը,
- ինժեներական ցանցերն ու կոմունալ սպասարկումը(էլեկտրամատակարարում, գազամատակարարում, ջրամատակարարում, ջեռուցում և այլն),
- բնակելի, հասարակական և արտադրական նշանակության շենքեր-շինությունների արժեքի վրա ազդող այլ գործոններ

Գնահատողն օգտվել է անշարժ գույքի շուկայում առկա, նույն տարածաշրջանում վաճառքի ենթակա, կամ վաճառված, գնահատվող անշարժ գույքին նման բազմաբնակարան բնակելի շենքերում տեղակայված անշարժ գույքերի տվյալներից: Համեմատական անշարժ գույքերի վերաբերյալ տվյալները ձեռք են բերվել ընկերության բազայից, համացանցից, ճշգրտվել ընկերության աշխատակիցների կողմից, ինչպես նաև ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից հրապարակված միջին շուկայական գներից: Այնուհետև ձեռք բերված համեմատական անշարժ գույքերից ընտրվել են այնպիսիները, որոնք առավել նման են գնահատվողին և համեմատության հաշվարկները իրականացվել են ընտրվածների հետ:

Համեմատության միավոր է ընտրվել շինության 1քմ. արժեքը և հաշվարկները (ըստ համեմատության տարրերի) իրականացվել են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Համեմատության տարրերը	Գնահատվող անշարժ գույք	Համեմատական 1	Համեմատական 2	Համեմատական 3
Հասցեն /Գտնվելու վայրը/	Երևան, Աջափնյակ Ա. Միկոյան փողոց 2/2 շենք, 182	ք. Երևան, Անաստաս Միկոյան փողոց	ք. Երևան, Անաստաս Միկոյան փողոց	ք. Երևան, Անաստաս Միկոյան փողոց
Գինը (Արժեքը) /դրամ/		59079000	62978214	59079000
Տեղեկատվության աղբյուրը		https://www.list.am/item/21447533	https://www.list.am/item/20568447	https://www.list.am/item/22181418
Գինը (Արժեքը) /դրամ/քմ/		832 099	749 741	832 099
Վաճառքի (առաջարկի) ամիսը/տարին	04.03.2025 թ.	03.2025 թ.	03.2025 թ.	03.2025 թ.
ուղղումը /%/		0%	0%	0%
ուղղումը /դրամ/քմ/		0	0	0
ուղղված արժեքը /դրամ/քմ/		832 099	749 741	832 099
Սակարկություն	գնահատում	սակարկելի է	սակարկելի է	սակարկելի է
ուղղումը /%/		-5%	-5%	-5%
ուղղումը /դրամ/քմ/		-41605	-37487	-41605
ուղղված արժեքը /դրամ/քմ/		790 494	712 254	790 494
Նպատակային նշանակությունը	բնակելի	բնակելի	բնակելի	բնակելի
ուղղումը /%/		0%	0%	0%
ուղղումը /դրամ/քմ/		0	0	0
ուղղված արժեքը /դրամ/քմ/		790 494	712 254	790 494
Գործառնական նշանակությունը	բնակարան	բնակարան	բնակարան	բնակարան
ուղղումը /%/		0%	0%	0%
ուղղումը /դրամ/քմ/		0	0	0
ուղղված արժեքը /դրամ/քմ/		790 494	712 254	790 494
Ընթացիկ	բնակարան	բնակարան	բնակարան	բնակարան

օգտագործումը				
ուղղումը /%/		0%	0%	0%
ուղղումը /դրամ/քմ/		0	0	0
ուղղված արժեքը /դրամ/քմ/		790 494	712 254	790 494
Սահմանափակումներ	սահմանափակումներ չունի	սահմանափակումներ չունի	սահմանափակումներ չունի	սահմանափակումներ չունի
ուղղումը /%/		0%	0%	0%
ուղղումը /դրամ/քմ/		0	0	0
ուղղված արժեքը /դրամ/քմ/		790 494	712 254	790 494
Գույքային իրավունքները	սեփականություն	սեփականություն	սեփականություն	սեփականություն
ուղղումը /%/		0%	0%	0%
ուղղումը /դրամ/քմ/		0	0	0
ուղղված արժեքը /դրամ/քմ/		790 494	712 254	790 494
Տեղադրությունը	միջինից բարձր	միջինից բարձր	միջինից բարձր	միջինից բարձր
ուղղումը /%/		0%	0%	0%
ուղղումը /դրամ/քմ/		0	0	0
ուղղված արժեքը /դրամ/քմ/		790 494	712 254	790 494
Դիրքը	միջինից բարձր	միջինից բարձր	միջինից բարձր	միջինից բարձր
ուղղումը /%/		0%	0%	0%
ուղղումը /դրամ/քմ/		0	0	0
ուղղված արժեքը /դրամ/քմ/		790 494	712 254	790 494
Տարածաշրջանի գրավչությունը	լավ	լավ	լավ	լավ
ուղղումը /%/		0%	0%	0%
ուղղումը /դրամ/քմ/		0	0	0
ուղղված արժեքը /դրամ/քմ/		790 494	712 254	790 494
Տրանսպորտային մատչելիությունը	ասֆալտապատ	ասֆալտապատ	ասֆալտապատ	ասֆալտապատ
ուղղումը /%/		0%	0%	0%
ուղղումը /դրամ/քմ/		0	0	0
ուղղված արժեքը /դրամ/քմ/		790 494	712 254	790 494
Մեքենաների կայանման հարմարավետությունը	ունի կայանատեղի	ունի կայանատեղի	ունի կայանատեղի	ունի կայանատեղի
ուղղումը /%/		0%	0%	0%
ուղղումը /դրամ/քմ/		0	0	0
ուղղված արժեքը /դրամ/քմ/		790 494	712 254	790 494
Հեռավորությունը հասար. սպասարկ. օբյեկտներից	200 մ շառավղով	200 մ շառավղով	200 մ շառավղով	200 մ շառավղով
ուղղումը /%/		0%	0%	0%



ուղղումը /դրամ/քմ/		0	0	0
ուղղված արժեքը /դրամ/քմ/		790 494	712 254	790 494
Շրջակա միջավայրը	բնակելի թաղամաս	բնակելի թաղամաս	բնակելի թաղամաս	բնակելի թաղամաս
ուղղումը /%/		0%	0%	0%
ուղղումը /դրամ/քմ/		0	0	0
ուղղված արժեքը /դրամ/քմ/		790 494	712 254	790 494
Բարեկարգված բակի առկայությունը	կիսաբարեկարգ	կիսաբարեկարգ	կիսաբարեկարգ	կիսաբարեկարգ
ուղղումը /%/		0%	0%	0%
ուղղումը /դրամ/քմ/		0	0	0
ուղղված արժեքը /դրամ/քմ/		790 494	712 254	790 494
Շենքի կառուցվածքը	մոնոլիտ	մոնոլիտ	մոնոլիտ	մոնոլիտ
ուղղումը /%/		0%	0%	0%
ուղղումը /դրամ/քմ/		0	0	0
ուղղված արժեքը /դրամ/քմ/		790 494	712 254	790 494
Շենքի կառուցման տարեթիվը	նորակառույց	նորակառույց	նորակառույց	նորակառույց
ուղղումը /%/		0%	0%	0%
ուղղումը /դրամ/քմ/		0	0	0
ուղղված արժեքը /դրամ/քմ/		790 494	712 254	790 494
Միջհարկային ծածկը	երկաթբետոնե	երկաթբետոնե	երկաթբետոնե	երկաթբետոնե
ուղղումը /%/		0%	0%	0%
ուղղումը /դրամ/քմ/		0	0	0
ուղղված արժեքը /դրամ/քմ/		790 494	712 254	790 494
Առաստաղի բարձրությունը	3,6 մ	2,9 մ-3.1 մ	2,9 մ-3.1 մ	2,9 մ-3.1 մ
ուղղումը /%/		0%	0%	0%
ուղղումը /դրամ/քմ/		0	0	0
ուղղված արժեքը /դրամ/քմ/		790 494	712 254	790 494
Արտաքին պատերը	քարե	քարե	քարե	քարե
ուղղումը /%/		0%	0%	0%
ուղղումը /դրամ/քմ/		0	0	0
ուղղված արժեքը /դրամ/քմ/		790 494	712 254	790 494
Արտաքին հարդարումը	երեսպատված	երեսպատված	երեսպատված	երեսպատված
ուղղումը /%/		0%	0%	0%
ուղղումը /դրամ/քմ/		0	0	0
ուղղված արժեքը /դրամ/քմ/		790 494	712 254	790 494
հարկայնությունը	12	12	12	11
ուղղումը /%/		0,0%	0,0%	0,0%

ուղղումը /դրամ/քմ/		0	0	0
ուղղված արժեքը /դրամ/քմ/		790 494	712 254	790 494
Բնակարանի հարկը	2	2	3	4
ուղղումը /%/		0,0%	0,0%	0,0%
ուղղումը /դրամ/քմ/		0	0	0
ուղղված արժեքը /դրամ/քմ/		790 494	712 254	790 494
Վերջին հարկ	ոչ	ոչ	ոչ	ոչ
ուղղումը /%/		0%	0%	0%
ուղղումը /դրամ/քմ/		0	0	0
ուղղված արժեքը /դրամ/քմ/		790 494	712 254	790 494
Ներքին ընդհանուր վիճակի գնահատական	լավ	լավ	լավ	լավ
ուղղումը /դրամ/քմ/		0	0	0
ուղղված արժեքը /դրամ/քմ/		790 494	712 254	790 494
Ջեռուցում	ջեռուցման համակարգով	ջեռուցման համակարգով	ջեռուցման համակարգով	ջեռուցման համակարգով
ուղղումը /%/		0,0%	0,0%	0,0%
ուղղումը /դրամ/քմ/		0	0	0
ուղղված արժեքը /դրամ/քմ/		790 494	712 254	790 494
Այլ գործոններ	չունի	չունի	չունի	չունի
ուղղումը /%/		0,0%	0,0%	0,0%
ուղղումը /դրամ/քմ/		0	0	0
ուղղված արժեքը /դրամ/քմ/		790 494	712 254	790 494
Մակերեսը	74,1	71	84	71
ուղղումը /%/		0,0%	0,0%	0,0%
ուղղումը /դրամ/քմ/		0	0	0
ուղղված արժեքը /դրամ/քմ/		790 494	712 254	790 494
Կշռային գործակից		0,33	0,33	0,34
Գնահատվող անշարժ գույքի ուղղված շուկայական արժեքը /դրամ/քմ/			764 674	
Գնահատվող անշարժ գույքի ուղղված շուկայական արժեքը /դրամ/ Կլորացված՝			56 662 376	
			56 660 000	

ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ՈՐՈՇՈՒՄ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԵԹՈԴՈՎ

Եկամտային մոտեցմամբ շուկայական արժեքը որոշվում է անշարժ գույքի եկամուտ բերելու կարողությամբ: Եկամտային մեթոդի շրջանակներում օգտագործվել է եկամտի կապիտալավերաժման եղանակը: Եկամտային մեթոդով գնահատումը կատարվել է ուղղակի կապիտալավերաժման եղանակով, և գնահատման ժամանակ կիրառվել են.

- **պոպոնցիալ համախառն եկամուտ**՝ գնահատվող անշարժ գույքի առավել արդյունավետ օգտագործումից ստացվող հնարավոր եկամուտ, որը կարող է հաշվարկվել ելնելով այն ենթադրություններից, որ անշարժ գույքը հանձնվել է վարձակալության կամ նմանատիպ անշարժ գույքի այլ օգտագործման վերաբերյալ տեղեկատվության վերլուծության հիման վրա: Այդ ենթադրությունից ելնելով պոպոնցիալ համախառն եկամտի կանխատեսումը իրականացվել

է նմանատիպ անշարժ գույքի վերաբերյալ շուկայական տեղեկատվության վերլուծության հիման վրա և հաշվարկվել է տարեկան կտրվածքով: Գնահատման գործընթացում հաշվի են առնվել նաև նմանատիպ անշարժ գույքի վարձակալական պայմանագրերի բնորոշ (հատուկ) պայմանները,

- **իրական համախառն եկամուտը՝** պոտենցիալ համախառն եկամուտն է՝ նվազեցված անշարժ գույքի պարապորդի (թերբեռնվածության) և չվճարումների հետևանքով չստացված եկամուտների (կրած ծախսերի) չափով: Անշարժ գույքի պարապորդը (թերբեռնվածությունը) առաջանում է մշտապես կամ պարբերաբար չօգտագործվող մակերեսների հետևանքով և վարձակալների փոփոխության հետ կապված միջանկյալ (չվարձակալված) ժամանակահատվածի առկայության հետևանքով,
- **զուտ գործառնական եկամուտ՝** իրական համախառն եկամուտն է՝ նվազեցված շահագործման և կառավարման ծախսերի չափերով, առանց հաշվի առնելու փոխառու միջոցների գծով վճարումները և ամորտիզացիոն հատկացումները,
- **շահագործման ծախսեր՝** անշարժ գույքի գործառնական պիտանելիության պահպանման համար անհրաժեշտ ծախսերն են, որոնք ապահովում են պոտենցիալ համախառն եկամտի ստացումը, շահագործման ծախսերն են՝

1) **հասարարուն ծախսեր՝** գույքահարկի, հողի հարկի, ապահովագրական և այլ հաստատուն վճարումների հետ կապված ծախսերն են, որոնք կախված չեն անշարժ գույքի շահագործման ծանրաբեռնվածությունից,

2) **փոփոխական ծախսեր՝** կոմունալ, պահպանության, սանմաքրման, աղբահանության և այլ փոփոխական վճարումների և հարկերի հետ կապված ծախսերն են, որոնք կախված են անշարժ գույքի շահագործման ծանրաբեռնվածությունից,

3) **վերականգնման ծախսեր** (պահուստային միջոցներ)՝ անշարժ գույքի տնտեսական կյանքի ընթացքում տանիքի, սանիտարական տեխնիկայի, վերելակի, ներքին կամ արտաքին ընթացիկ հարդարման և այլ առանձին արագամաշ տարրերի փոխարինման կամ բարելավման հետ կապված ծախսերն են,

- **կառավարման ծախսեր՝** առանձին ծախսեր են, որոնք ուղղված են վարչակազմի աշխատավարձի ապահովմանը և կառավարման հետ կապված այլ ծախսերին:

Անշարժ գույքի պոտենցիալ համախառն եկամուտը առաջանում է գույքը վարձակալությամբ հանձնելիս: Գնահատվող անշարժ գույքի շուկայական արժեքը հաշվարկվել է գնահատվող գույքի տեղակայման տարածքում վարձակալության առաջարկվող (համացանց, ընկերության սեփական բազա) բնակարանների վարձավճարների տվյալների վերլուծությամբ: Հարկ է նշել, որ ՀՀ-ում անշարժ գույքի վարձակալության շուկայում դեռևս գործարքների գերակշիռ մասի պայմանագրերում արտացոլված վարձավճարները արժանահավատ չեն: Մասնավորապես անշարժ գույքերի վարձակալման ժամանակ հիմնականում ֆիքսվում է վարձատուի, զուտ գործառնական եկամուտը այլ ոչ թե, պոտենցիալ կամ իրական համախառն եկամուտը: Վարձակալությամբ տրված և առաջարկվող անշարժ գույքերի վարձավճարները հիմնականում չեն ներառում, շահագործման ծախսերը (բացառությամբ, հաստատուն ծախսերից՝ գույքահարկի և հողի հարկի վճարումները), փոփոխական ծախսերը (կոմունալ, պահպանության, սանմաքրման, աղբահանության և այլ փոփոխական վճարումների և հարկերի հետ կապված ծախսերը, որոնք կախված են անշարժ գույքի շահագործման ծանրաբեռնվածությունից) պայմանագրով կամ բանավոր պայմանավորվածությամբ կատարում են վարձակալները, վերականգնման ծախսերը պայմանագրային գներում չեն արտացոլվում, քանի որ վարձատուները վարձակալներին անշարժ գույքը վարձակալությամբ հանձնելիս պայմանագրով նախատեսում են վարձակալությամբ հանձնված անշարժ գույքի ընթացիկ նորոգումները վարձակալի հաշվին և հիմնականում պահանջում են վարձակալության ժամկետի ավարտին գույքը հանձնել վարձատուին գույքի վարձակալությամբ տրման ամսաթվի վիճակով:

Հաշվի առնելով վերոգրյալը, գնահատողի կողմից իրականացվել է պոտենցիալ համախառն եկամտի կանխատեսում, որի արդյունքում պարզվել է, որ գնահատվող անշարժ գույքի

համեմատական մեթոդով որոշված վարձավճարի շուկայական արժեքը համապատասխանում է գուտ գործառնական եկամտին: Վերլուծության ընթացքում պարզվում է, որ գնահատվող անշարժ գույքը (եթե այն ունենար լավ վիճակի ներքին հարդարում) կարելի է հանձնել վարձակալությամբ (բարձրակարգ վարձակալության ծառայության մատուցման պայմանով): Այսպիսով գնահատվող անշարժ գույքը ներքին հարդարումից հետո կարելի է հանձնել վարձակալությամբ՝ 220000 դրամ ամսեկան վարձավճարով:

Կապիտալիզացիայի գործակիցը տոկոսադրույք է, որը կիրառվում է անշարժ գույքից տարեկան կտրվածքով ստացվող ապագա եկամուտների հոսքը ընթացիկ արժեքի վերածման նպատակով: Կապիտալավերածման գործակիցը կիրառվում է անշարժ գույքի շուկայական արժեքը որոշելիս: Կապիտալավերածման գործակիցը իր մեջ ներառում է կապիտալից ստացված եկամուտը և կապիտալի վերադարձը: Կապիտալից ստացված եկամուտը՝ ներդրողի դրամական միջոցների օգտագործման դիմաց վճարվող տոկոսաչափն է, կապված ներդրումների կոնկրետ ժամանակամիջոցի և ռիսկերի գործոնների հետ, իսկ կապիտալի վերադարձը՝ ներդրված սկզբնական գումարի մարումն է:

Կիրառված կապիտալավերածման գործակիցը որոշվել է շուկայական խտացման (էկստրակցիայի) եղանակով:

Վերլուծվել են վաճառված անշարժ գույքերի գների և այդ անշարժ գույքերի (նմանատիպ անշարժ գույքերի) վարձավճարները և ըստ այդմ դրանց միջինացված մեծությունների հարաբերությամբ աղյուսակ 3-ում որոշվել է տվյալ տարածաշրջանում կապիտալավերածման գործակիցը:

Աղյուսակ 3

ՎԱՃԱՌՔԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆՆԵՐ						
	Վաճառքի/ առաջարկի գին	մա կեր ես	Ժամանակ	հարկ/ հարկայնությ յուն	1քմ. գին	տեղեկատվության աղբյուր
բնակարան 1	59079000	71	03.2025	12/2	832099	https://www.list.am/item/21447533
բնակարան 2	62978214	84	03.2025	12/3	749741	https://www.list.am/item/20568447
բնակարան 3	59079000	71	03.2025	11/4	832099	https://www.list.am/item/22181418
Միջին գին					804646	

Աղյուսակ 4

ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆՆԵՐ							
Հ/Հ	Վարձակալության վճար	մակերես	ներքին հարդարանքը	Ուղղում ներքին հարդարանքի հետք կապված	Կահույքի ռկայություն՝ կա —10%, մասնակի — 5% չկա —0%	1 քմ. գին	Տեղեկատվության աղբյուրը
բնակարան 1	250000	71	լավ	0%	-10%	3169	https://www.list.am/item/21566477
բնակարան 2	280000	82	լավ	0%	-10%	3073	https://www.list.am/item/21986752
բնակարան 3	256009	71	լավ	0%	-10%	3245	https://www.list.am/item/22086361
Միջին վարձավճար						3162	-

ճար							
-----	--	--	--	--	--	--	--

Այսպիսով, կապիտալիզացիայի գործակիցը հաշվարկված շուկայական խտացման էքստրակցիայի մեթոդով կկազմի՝ 3,14:

Շահագործման և կառավարման ընդհանուր միջինացված ծախսերը կազմում են 26% :

Գնահատվող անշարժ գույքի շուկայական արժեքի հաշվարկը եկամտային մեթոդով ներկայացված է աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5

Հ/Հ	Գույքի արժեքի հաշվարկ		
1	Ամսեկան վարձը	220000	
2	Պոտենցիալ համախառն եկամուտ /1/x 12	2640000	
3	Պարապուրդ և չվճարումներ	10%	264000
4	Իրական համախառն եկամուտ /2/-/3/	2376000	
5	Ընդհանուր ծախսեր	26%	617760
6	Զուտ գործառնական եկամուտ /4/-/5/	1758240	
7	Կապիտալացման գործակից	3,14%	
8	Արժեք /6/ / 7/	55994904	
9	Մակերեսը քմ	74,1	
10	1 քմ վերանորոգման ծախսերը	0	
11	Ընդամենը /9/ x /10/	0	
12	Արժեքը /8/-/11/	55994904	
13	Կլորացված	55990000	

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՈՒՄ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄ

Ստորև բերված աղյուսակ 6-ում ներկայացված են գնահատման արդյունքները և կշռային գործակիցները, կախված գնահատման մոտեցումից:

Աղյուսակ 6

Կիրառված մոտեցումը	Արժեքը /ՀՀ դրամ/	Կշիռը	Միջին կշռված շուկայական արժեքը /ՀՀ դրամ/
Ծախսային մոտեցում	չի կիրառվել		56395388
Համեմատական մոտեցում	56662376	0,6	
Եկամտային մոտեցում	55994904	0,4	

Այսպիսով, սույն գնահատման արդյունքների համաձայն, գնահատման ներկայացված Երևան, Աջափնյակ Ա. Միկոյան փողոց 2/2 շենք, 182 հասցեում գտնվող բնակարանի շուկայական արժեքը, առ 04.03.2025 թ.. կլորացված կազմում է՝ 56400000 (հիսունվեց միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ օրենք « գնահատման գործունեության մասին», ընդունված 04.10.2005թ.
2. «ՀՀ-ում գնահատման ստանդարտները, ինչպես նաև գնահատողի վարքագծին ներկայացվող պահանջները սահմանելու մասին» կառավարության որոշման
3. ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից 21.03.2005թ., N 46 հրամանով հաստատված և գործողության մեջ դրված, «ՀԱՅՍԵՅՍՄՇԻՆ ԵՎ ԿՊ ԳՀԻ» ՓԲԸ-ի կողմից մշակված «Բնակելի, հասարակական, և արտադրական շենքերի տեխնիկական վիճակի հետազննության մեթոդական ցուցումներ», Երևան 2006թ.
4. ՀՀ թիվ ՀՕ-320 օրենք «Իրավական ակտերի մասին», ընդունված 03.04.2002թ.

5. ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.01.2008թ. N 05-Ն «Գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգը հաստատելու մասին» հրաման

6. ՀՀ քաղաքաշինության նախարարի 15.02.2008թ. N 19-Ն «Քաղաքաշինական փաստաթղթերի (ծրագրային և ճարտարապետաշինարարական) մշակման աշխատանքների արժեքի հաշվարկման կարգը հաստատելու մասին» հրաման

7. ՀՀ քաղաքաշինության նախարարություն, 21.08.2001թ., թիվ 69 «Շինարարության համար կառուցվող ժամանակավոր շենքերի և կառուցվածքների նախահաշվային նորմերի հաստատման մասին» հրաման

8. ՀՀ քաղաքաշինության նախարարություն, 21.08.2001թ., թիվ 68 «Շինարարական աշխատանքների վրա կլիմայական պայմանների ազդեցությունը հաշվի առնող նախահաշվային նորմերի հաստատման մասին» հրաման

9. “Оценка недвижимости”, под. ред. А. Г. Грязновой, М. А. Федотовой, Москва, 2007г.

10. “Оценка недвижимости”, Л. Н. Тэпман, Москва, 2005г.

11. “Оценка технического состояния зданий”, В. М. Калинин, С. Д. Сокова, Москва, 2005г.



12. “Оценка бизнеса”, под. ред. А. Г. Грязновой, М. А. Федотовой, Москва, 2007г.

13. “Ипотека управление, организация, оценка”, И. В. Довиденко, В. З. Черняк, Москва, 2005г.

14. “Оценка стоимости недвижимости”, Е. Н. Иванова, Москва, 2007г.


15. “Оценка имущества”, А. И. Зимин, Москва, 2007г.

ԼՈՒՍԱՆԿԱՐՁԱԿԱՆ ՀԱԿԵԼՎԱԾ






Համադրելի բնակարանների տեղադիրքը



Handwritten signature


<https://www.list.am/item/20568447>

sex: Mapker Gmail YouTube Kaptu 26 · Экзотика — Р... Exchange Archive <https://www.list.am...> Հոդադրագրք բն...




<https://www.list.am/item/22181418>

sex: Mapker Gmail YouTube Kaptu 26 · Экзотика — Р... Exchange Archive <https://www.list.am...> Հոդադրագրք բն...




<https://www.list.am/item/21566477>

sex: Mapker Gmail YouTube Kaptu 26 · Экзотика — Р... Exchange Archive <https://www.list.am...> Հոդադրագրք բն...



[Handwritten signature]



ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏԱՆԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Սույն վկայականով հաստատվում է 5 ապրիլի 2022 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑԱԾՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Երևան, Աջափնյակ Ա. Միկոյան փողոց 2/2 շենք, 182 բնակարան

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՏՏԱԹՂԹԵՐԸ

Առուվաճառքի պայմանագիր 31.03.2022թ. թիվ 1301

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ


Կադաստրային ծածկագիրը՝ 01-001-0658-0020

Մակերեսի չափը (հա)՝ 1.0283

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Բնակելի կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՑԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



ՎԿԱՅԱԿԱՆ N 05042022-01-0040, գաղտնաբառ՝ 2WGRFWYBQTK

Փաստաթղթի իսկությունը և վավերանմուշությունը կարող է ստուգել կադաստրի կոմիտեի
www.e-cadastre.am կայքի միջոցով

Էջ 1/2

5. ԵԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝ բնակելի
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ
1	01-001-0658-0020-002-182	Բնակարան	74.1 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 224-րդ հոդվածի սեփականատերը բազմաբնակարան բնակելի շենքի զբաղեցրած հողամասի և ընդհանուր օգտագործման տարածքների նկատմամբ ունի 74/35390 բաժնային սեփականության իրավունք:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ԱՐԱ ԱՎԵՏԻՔՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի գլխավոր ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 05042022-01-0040, գաղտնաբառ՝ 2WGFRFWVVBQTK

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կապող է ստուգելու կադաստրի նախնի
www.e-codestore.am կայքի միջոցով

Էջ 2/2





ՎԿԱՅԱԿԱՆ N ԳԳ-2022-62

Սույն վկայականը տրվում է

ՍՈՒՐԵՆ ՏԻԳՐԱՆԻ ԹՈՓԱԼՅԱՆԻՆ

(անունը, հայրանունը, ազգանունը)



առ այն, որ նա մասնակցել է
Կադաստրի կոմիտեի կողմից
կազմակերպված
գնահատման գործունեության
որակաշրջանի քննության:
Կադաստրի կոմիտեի ղեկավարի
2022 թվականի դեկտեմբերի 21-ի N452-Լ
հրամանի համաձայն տրամադրվել է

ԳՆԱՀԱՏՈՂԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՄ

Գործողության ժամկետը սկսվել է 21 դեկտեմբերի 2022 թ.

Կադաստրի
կոմիտեի ղեկավար՝

Կ Տ



Կոորդինատոր

Սուրեն Թովմասյան
(անունը, ազգանունը)

21 դեկտեմբերի 2022 թ.

ՉՔԼ-ով (նշված շտրիխ կոդ) հասանելի է ծանուցանումը և վավերականությունը կապով է առնվազն Կադաստրի
կոմիտեի www.e-cadastre.am կայքի միջոցով: